# ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

**Դատավորների ընդհանուր ժողովի Դատավորների գործունեության գնահատման և Ուսումնական հարցերի հանձնաժողովների դատավոր չհանդիսացող անդամների թեկնածուներ ներկայացրած հասարակական կազմակերպությունների, դատավորների և նրանց կողմից ներկայացրած թեկնածուների, ինչպես նաև ինքնաառաջադրված թեկնածուի վերաբերյալ**

21.07.2020

Դատական դեպարտամենտը, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 77-րդ հոդվածով սահմանված իրավակարգավորումների պահանջներով, հրապարակում է Դատավորների ընդհանուր ժողովի Դատավորների գործունեության գնահատման և Ուսումնական հարցերի հանձնաժողովների դատավոր չհանդիսացող անդամների թեկնածուներ (այսուհետ՝ Թեկնածուներ) ներկայացրած հասարակական կազմակերպությունների, դատավորների և նրանց կողմից ներկայացրած թեկնածուների, ինչպես նաև ինքնաառաջադրված թեկնածուի վերաբերյալ տեղեկությունները և թեկնածուների կենսագրությունները:

**1.Դատավորների գործունեության գնահատման հանձնաժողովի դատավոր չհանդիսացող անդամների թեկնածուներ.**

1) Վճռաբեկ դատարանի նախագահ Երվանդ Խունդկարյան և Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահ Լիլիթ Թադևոսյան.

*Թեկնածու՝ Աշխեն Ղարսլյան:*

2) «Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ, նախագահ Կ. Զադոյան.

*Թեկնածու՝ Արսեն Թավադյան:*

3) «Իրազեկ քաղաքացիների միավորում» խորհրդատվական ՀԿ, գործադիր տնօրեն՝ Ա. Մուշեղյան.

*Թեկնածու՝ Անահիտ Մանասյան:*

**2. Ուսումնական հարցերի հանձնաժողովի դատավոր չհանդիսացող անդամների թեկնածուներ.**

1) Վերաքննիչ քրեական դատարանի դատավոր Նարինե Հովակիմյան.

*Թեկնածու՝ Գաբրիել Պետրոսյան:*

2) «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ, նախագահ Ա. Մելքոնյան.

*Թեկնածու՝ Հասմիկ Հարությունյան:*

3) «Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ, նախագահ Կ. Զադոյան.

*Թեկնածու՝ Արփաշես Խալաթյան:*

4) *Թեկնածու՝ Աշխեն Ղարսլյան* (ինքնաառաջադրում):

*Դատական դեպարտամենտ*